



«Բնապահպանության նախարարություն»



Սպիտակի քաղաքապետարան



Empowered lives.
Resilient nations.



Սպիտակի քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի գլխավոր նպատակն է քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման ճանապարհով Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաև ցուցադրել նոր լուսադիոդային տեխնոլոգիաների առավելությունները:

1-ին փուլ՝ Ս. Ավետիսյան և Ա. Մանուկյան փողոցներ, 2015

Ցուցադրական նախագիծն իրականացվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Սպիտակի քաղաքապետարանի միջև 2015թ. հուլիսին ստորագրված մտադրությունների մասին հուշագրի շրջանակներում:

Պիլոտային փողոցների ընդհանուր երկարությունը՝ 1.1 կմ

Ֆինանսավորում՝ ՄԱԶԾ-ԳԷՖ՝ 27%, Սպիտակի քաղաքապետարան՝ 73%

Ս. Ավետիսյան և Ա. Մանուկյան փողոցների ցուցադրական նախագծի լուսավորության համակարգի ցուցանիշները	Նախկինում Բարձր ճնշման նատրիումային ¹	Ներկայում ԼԵԴ լուսատուներ	Օգուտներ
Լուսատուների քանակը	50	50	
Լուսավորվածության միջին մակարդակը, լյուքս	4.2	13	Համապատասխանություն նորմերին
Գումարային հզորությունը, կՎտ	14.25	6	Նվազում՝ 8.25
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	25	10.5	Խնայողությունը՝ 14.5
Տարեկան ջերմոցային գազերի արտանետում, տCO ₂	11	4.6	Կրճատում՝ 6.4
Շահագործման և սպասարկման տարեկան ծախսեր, ԱՄՆ դոլար	2 180	918	Խնայողություն՝ 1 262

Ցուցադրական նախագծի իրականացման հիմնական օգուտները

- ✓ Փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է մոտ 58%:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են 6.4 տCO₂:
- ✓ **էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամի ստեղծում** Սպիտակի քաղաքապետարանում:

¹ Հաշվարկները 250Վտ ԲՃ լամպերի համար են, որոնց փոխարինումը 80Վտ ԿԼԼ լամպերով անթույլատրելի է:

2-րդ փուլ՝ Շահումյան և Ավետիսյան փողոցներ, 2017թ.

Ցուցադրական նախագծի 1-ին փուլի իրականացման արդյունքում էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամում կուտակված միջոցները օգտագործվել են քաղաքի լուսավորության համակարգի հետագա արդիականացման նպատակով:

Փողոցների ընդհանուր երկարությունը՝ 0.9 կմ,

Ֆինանսավորում՝ ՄԱՀԾ-ԳԷՖ ծրագիր՝ 50%, Սպիտակի քաղաքապետարան՝ 50%:

Շահումյան, Ավետիսյան փողոցների ցուցադրական նախագծի լուսավորության համակարգի ցուցանիշները	Նախկինում Բարձր ճնշման նատրիումային	Ներկայում ԼԵԴ լուսատուներ	Օգուտներ
Լուսատուների քանակը	38	38	
Լուսավորվածության միջին մակարդակը, կուքս	4.2	13	Համապատասխանություն նորմերին
Գումարային հզորությունը, կՎտ	9.9	2.8	Նվազում՝ 7.1
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	17.4	4.9	Խնայողությունը՝ 12.5
Ջերմոցային գազերի տարեկան արտանետում, տCO ₂	7.8	2.2	Կրճատում՝ 5.6
Շահագործման և սպասարկման տարեկան ծախսեր, ԱՄՆ դոլար	1 312	367	Խնայողություն՝ 944

Ցուցադրական նախագծի իրականացման հիմնական օգուտները

- ✓ Փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է մոտ 72%:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են 5.6 տCO₂:

Սպիտակ քաղաքում իրականացված երկու նախագծերի արդյունքները

- ✓ Լուսավորության համակարգի արդիականացման արդյունքում տարեկան խնայողությունները կազմում են մոտ՝ **2 206 ԱՄՆ** դոլար:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են **12 տCO₂**:
- ✓ Բարելավվել է ընդհանուր առմամբ **2 կմ** ճանապարհային լուսավորության համակարգ:

Այլ առավելություններ

- ✓ Լուսավորվածության մակարդակը և համաչափությունը համապատասխանեցվել են գործող նորմերին, բարձրացնելով անվտանգության մակարդակը,
- ✓ Հիմնվել է էներգախնայողության, լուսավորվածության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մշտադիտարկման թափանցիկ համակարգ,
- ✓ Քաղաքի էներգետիկ գործողությունների պլանի մեջ ներառվել է լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները,
- ✓ Սպիտակ քաղաքում իրականացված ցուցադրական ծրագրերի շրջանակներում ստեղծված էներգաարդյունավետության շրջանառու ֆոնդը շարունակաբար համալրվում է, որի միջոցները կարող են օգտագործվել լուսավորության համակարգի հետագա արդյունավետության բարձրացման համար:

Միջոցառումներից առաջ



Միջոցառումներից հետո

